ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ Թումո ինժեներական և կիրառական գիտությունների համալիր

Իրականացման ժամանակահատված: 18.03.2019 - 30.12.2025

ԱլԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 12 500 000

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/tumolabs, facebook.com/42Yerevan, instagram.com/tumolabs, linkedin.com/school/tumo-labs/, linkedin.com/school/42-yerevan/

Նախագծի կայքէջ: www.convergence.center

Նախագծի նկարագրություն:

ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրը ժամանակակից ԳՏԻՄ էկոհամակարգ է Երևանում: Ուսանողների և երիտասարդ մասնագետների համար նախատեսված այս հետազոտությունների, կրթության և ստարտափների կենտրոնը կմիավորի ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերներին՝ կամրջելու Հայաստանի բարձրագույն կրթության և արդյունաբերության միջև առկա բացը: Այս համալիրը կմիավորի ակադեմիան և արդյունաբերությունը՝ կապելով տեղի ուսանողներին և հետազոտողներին միմյանց հետ և դրանով իսկ կխթանի նորարարությունն ու ձեռներեցությունը: Կենտրոնը կազմված կլինի մի շարք ծրագրերից: Կրթական, հետազոտական և արդյունաբերական հարթությունում այն կհյուրընկալի ԹՈՒՄՈ լաբերը, 42 Երևանը, ընհանուր գործածման և գրասենյակային տարածքներ, ինչպես նաև կոնֆերանս կենտրոն: Այս ստորաբաժանումները փոխազդելու են միմյանց հետ և լրացնելու միմյանց՝ իրենց մասնագիտացման համապատասխան ոլորտներում:

Ակնկալվող արդյունքներ:

- ԳՏԻՄ ոլորտում 18 տարեկանից բարձր ուսանողների կարողությունների զարգացմում:
- Էկոհամակարգի դերակատարների՝ տեխնոլոգիական ընկերությունների, ԳՏԻՄ կրթական հաստատությունների և մանկավարժների միջև համագործակցության աճ: